Հասցեատեր՝
«Վեդի ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ vedifootballclub@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12.06.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՍՖԱԲ Փլեյ-օֆֆ-005
Խախտում՝	1. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Մոսյանի (57432) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Խ, 19-րդ կետ) 2. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Հարություն Կեսոյանի (22152) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություն թույլ տալը (Հավելված 1 Խ, 20-րդ կետ) 3. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Մարտիրոս Գուլիկյանի (57448) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություն և հայհոյանք թույլ տալը, հարվածելը (Հավելված 1 Խ, 20-րդ կետ) 4. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստների կողմից մարզադաշտում անկարգություններ առաջացնելը (Հավելված 1 Խ, 9-րդ կետ)
Առաջնություն՝	Սիրողական Բ լիգա
Խաղ՝	«Մարտունու մարզադպրոց» - «Վեդի ՖԱ», 24.05.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Մոսյանին (57432) որակազրկել 5 խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Վեդի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:
2. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Հարություն Կեսոյանին (22152) որակազրկել 2 ամիս ժամկետով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Վեդի

ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

3. «Վեդի ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Մարտիրոս Գուլիկյանի (57448) որակազրկել 6 ամիս ժամկետով։ Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ «Վեդի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։
4. «Վեդի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։